ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ք.Երևան, Ավան, Բաբաջանյան փ. 9

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ՝

Ֆինանսատնտեսագիտական քոլեջ

ՊԱՇՏՈՆԸ՝

Բժիշկ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

- իրականացնել շտապ և անհետաձգելի արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում,
- ցուցաբերել սովորողների կամ համալսարանի աշխատակիցների խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, դեղորայքային օգնություն,
- ըստ անհրաժեշտության հավաքել մանրամասն տվյալներ դիմողի (սովորող կամ աշխատակից) նախկինում տարած վարակիչ հիվանդությունների մասին, ուղեգրել դիմողին պահանջվող բժշկական և լաբորատոր-գործիքային հետազոտությունների,
- ըստ անհրաժեշտության դիմել շտապ օգնության ծառայությանը,
- իրականացնել համալսարանի կանոնադրությամբ, ռեկտորի հրամաններով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

- բարձրագույն բժշկական կրթություն (թերապևտի մասնագիտացմամբ),
- վերջին հինգ տարում վերապատրաստման հավաստագրի առկայություն,
- առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
- թիմում աշխատելու հմտություն և կազմակերպվածություն,
- տրամաբանելու, որոշումներ կայացնելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ 05 մարտի 2023 թ.

CV-ն և պահանջվող փաստաթղթերը կարող եք ուղարկել ՀՊՏՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի hr@asue.am էլփոստին՝ վերնագրի դաշտում նշելով հաստիքը, որի համար դիմում եք: Փաստաթղթերն ընդունվում են բացառապես էլեկտրոնային եղանակով:

Հարցազրույցի կհրավիրվեն CV-ի և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ընտրված թեկնածուները:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է բուհի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղմամբ https://asue.am/: